ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿԻ կողմից ՎՏԲ-Հայաստան Բանկի սպառողական վարկերի մանրածախ պորտֆելի մի մասի ձեռքբերմամբ պայմանավորված՝ հաճախ տրվող հարցեր և պատասխաններ

Հարց	Պատասխան
1. Փոխվե՞լ են արդյոք իմ վարկի պայմանները (վճարումների ժամանակացույցը, տոկոսադրույքը, ամսական վճարումների չափը և այլն):	Ձեր՝ ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ տեղափոխված վարկը շարունակելու է սպասարկվել նույն պայմաններով: Վարկային պայմանագրերի բոլոր էական պայմանները՝ վարկի գումարի չափը, տոկոսադրույքը, վճարումների ժամանակացույցը(գրաֆիկը), ամսական վճարումների չափը, մնում են անփոփոխ:
2. Կարո՞ղ եմ կատարել վարկի մարումներ ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿՈՒՄ առկա հաշվից կամ ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿԻ մոբայլ հավելվածով:	Այո, վարկի մարումները կարող եք կատարել ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿՈՒՄ առկա հաշվից կամ բացելով նոր հաշիվ, ինչպես նաև օգտվելով ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿԻ մոբայլ բանկինգ հավելվածից: ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿԻ մոբայլ բանկինգ ծառայությունը հնարավորություն է տալիս ոչ միայն մարել վարկային պարտավորությունները, այլև համալրել ավանդը, իրականացնել հաշիվներից փոխանցումներ այլ հաշվեհամարների, իրականացնել արտարժույթի փոխանակում, ճանապարհային ոստիկանության տուգանքների վճարումներ, կատարել բյուջետային և կոմունալ վճարումներ:

3. Արդյոք կարո՞ղ եմ վարկի մարումն իրականացնել նախկին բանկի մոբայլ հավելվածով:	Քանի որ Ձեր վարկը տեղափոխվել է ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ՝ վարկը նախկինում սպասարկած բանկի մոբայլ հավելվածում դրա մասին տվյալներն այլևս հասանելի չեն: ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿԻ մոբայլ բանկինգի «ABB Mobile Bank» հավելվածը հասանելի է և iOS և Android ծրագրերի համար: Դուք կարող եք «Google Play» կամ «App Store» օնլայն հարթակներից ներբեռնել «ABB Mobile Bank» հավելվածը, որից կարող եք օգտվել առանց Բանկ այցելելու, եթե ունեք ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿԻ գործող հաշիվ: Դժվարանալու դեպքում կարող եք այցելել ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿԻ ցանկացած մասնաճյուղ: Մասնաճյուղերի հասցեները հասանելի են հետևյալ հղումով. https://www.armbusinessbank.am/am/page/List-of-the-Banks-branches-service
4. Փոխվե՞լ է արդյոք իմ վարկի վարկային կոդը և ինչպես կարող եմ իմանալ այն:	Այո, Ձեր վարկի վարկային կոդը փոխվել է: Նոր վարկային կոդը ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿԻՑ Ձեզ ուղարկվել է sms-ով և էլեկտրոնային փոստով: Վարկային կոդի և Ձեզ հուզող հարցերի դեպքում, կարող եք դիմել նաև ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿԻ Զանգերի կենտրոն, աշխատանքային օրերին ժամը 09:00-20:00, ոչ աշխատանքային օրերին՝ 09:00-18:00 զանգահարելով +374

	10 59 20 19, +374 10 59 20 20, +374 60 37 25 00 հեռախոսահամարներով:
5. Ի՞նչ եղանակներով կարող եմ կատարել վարկի մարումը:	Ձեր վարկի մարումն այսուհետ կարող եք իրականացնել՝ • ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿԻ մասնաճյուղերի սրահներում գտնվող վճարահաշվարկային տերմինալներից, ինչպես նաև մասնաճյուղերում առկա Telcell, Easy Pay համակարգերի տերմինալներից. • ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿԻ մոբայլ բանկինգ հավելվածից. • Այցելելով Բանկի մոտակա մասնաճյուղ:
6. Ինչպե՞ս վարվել, եթե վարկի մարումը կատարել եմ նախկին բանկում ինձ տրամադրված վարկային կոդով, սակայն վարկս չի մարվել:	Եթե վարկի մարման գործարքը կատարել եք նախկին բանկում Ձեզ տրամադրված վարկային կոդով, փոխանցված գումարը չի ուղղվի ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿՈՒՄ սպասարկվող Ձեր վարկի մարմանը: Անհրաժեշտ է կատարել վարկի մարում ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿՈՒՄ՝ Ձեզ տրամադրված նոր վարկային կոդով՝ ժամկետանց պարտավորությունների առաջացումից խուսափելու համար: Այլ բանկի վարկային կոդով փոխանցված գումարը կվերադարձվի Ձեզ՝ առանց լրացուցիչ դիմումի: Եթե փոխանցումը կատարվել է հաշվեհամարից, ապա գումարը կվերադարձվի հաշվեհամարին: Եթե փոխանցումն արվել է վճարահաշվարկային տերմինալից, ապա հարկավոր է այցելել ՎՏԲ-Հայաստան Բանկ և հետ ստանալ գումարը:

	Եթե այնուամենայնիվ Ձեր վարկը ժամկետանց է նախկին բանկի վարկային կոդով փոխանցում կատարելու հետևանքով, Ձեր դիմումի հիման վրա ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿԸ կկատարի ժամկետանց պարտավորության ճշգրտում:
7. Կարո՞ղ եմ արդյոք իրականացնել իմ վարկի վերավարկավորում:	Այո, եթե չունեք ժամկետանց պարտավորություններ: Ժամկետանց պարտավորություն ունենալու դեպքում մոտեցեք ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿԻ ցանկացած մասնաճյուղ՝ ներկայացնելով Ձեր առաջարկը:

Պայմաններ և կանոններ